

ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Ազգային, Գրական, Քաղաքական, Գիտական

51^{րդ} ՏԱՐԻ, ԹԻԻ 42

Գ. ՇՐՋԱՆ

19 ՀՈԿՏԵՄԲ. 1902

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Մասիս շաբաթերթի ստեղծական թափանցիկ է Կ. Պոլսոյ համար «Մասսա»-ն ունի և զուտներուն համար Յիսուսն ունի, կանխիկ վճարելի: Արտատպան 12 ֆրանկ կամ 5 ռուպլի: Թղթատարական ծախքը խմբագրութեան վրայ է: Վեցամսեայ թափանցիկագրութիւն չընդունուիր: Թափանցիկագրութիւնները կը սկսին ամեն ամսոյ մէկէն: Մասիս հրատարակ կ'ենք ամեն շաբաթ առտու: Այն թափանցիկները որոնք պակաս քերք ստացած են, պէտք է խնայել ինքնուրուի խմբագրութեան: Ժամանակ անցնելէ վերջ աչս ճիշտակ առարկութիւնները նկատողութեան չեն տուուիր:

Զի հրատարակուած ձեռագիրները եւ չեն դարձուիր:

Ձեռք կը ծախուի ՀԱՏԻ 40 ՓԱՐԱՅԻ

Հարցէ

در علیّه آغوب ماطیوسیان مطبعه سنده «ماسیس» غزقه سی اداره سنه

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ՄԱՍԻՍ» Ի

Տպարան Յ. Մատթէոսեան

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

Rédaction de la Revue MASSIS

Imprimerie H. Matteosian

CONSTANTINOPLE

Գրասուն ՆՇԱՆ-ՊԱՊԻԿԵԱՆ
Կ. ՊՈԼԻՍ, 60 Էսկի-Չապրիե Ճասսեսի, 60

Հրասարակուեցաւ

ՀՐԱՆՏ Ս. ԽԱՆՃԵԱՆԻ

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ

ՕՍՄԱՆԷԱՆ ԿԱՅՍՐՈՒԹԵԱՆ

190 էջ, 16ածալ, գին 5 դր2.

Չարդարուած բազմաթիւ լուսատիպ պատկերներով : Անհրաժեշտ ամէն դպրոցականի եւ վաճառականի :

Նոյն հեղինակին՝

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ, ՄԻՋԻՆ ԴԱՍԸՆԹԱՑՔ

240 էջ, պտկրգդ. գին 5 դր2.

Եւրոպական ամենէն համառաւոր եւ նուազոյն գործերու հետեւողութեամբ :

Սոյն երկու գործերու իւրաքանչիւրէն գաւառի ուսուցիչներու նմոյշ կը զրկուի 50 փարայի դրոշմաթուղթի փոխարէն :

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

ՏՈՔԹ. Գ. ԳԱՐՐԻԷԼԵԱՆ

ԲԵՐԱ. ՄԵԾ ՓՈԼՈՑ, ԹԻԻ 200

Կալաքա-Սեբայի Լիսէին դէմ

ԴԵ. ԵՇ. ՇԲ. օրերը առաւօտեան կանուխէն մինչեւ իրիկուան ժ. 11¹/₂

ԲԵ. ԴԵ. ՈԼԲ. օրերը 6 էն մինչեւ 11¹/₂

Կիրակի օրերը ժամադրութեամբ

ԻԻԹԻԻՃԵԱՆ ԿԱՐԱՊԵՏ ԷՅԵՆՏԻԻ հետեւալ թարգմանութիւնները կը գտնուին մայրաքաղաքիս պրափաճաներուն քով .

	Հատոր	Չր.
Թափառական Հրեայ	4	50
Սկզբունք Քաղ. Տնտեսութեան	1	4
Կարմիր մարդոց երգումը	2	10
Ընտանեգութիւն	2	12
Փարիզի ամուսնութիւնները	1	5
Արուարձանի տղան	3	15
Հանրակառ. քին ոճերը	1	5
Ընտանեկան գաղտնիքներ	3	15

ՊՐՈՒՍԱՅԻ ԽԱՎՆՈՒՆԵՐԸ

ԳՈՐԾԱԾԵՑԷՔ

ՊՐՈՒՍԱՅԻ ԽԱՎՆՈՒՆԵՐԸ եւրոպական. ներէն աւելի ԴԻՄԱՑԿՈՒՆ ըլլալուն տաւարկոյս չկայ, հետեւալէս աւելի ԱԺԱՆ են :

Ս. ՄԱՐՏԻԿԵԱՆ ԵՒ ՈՐԴԻՈՅ

ՊՐՈՒՍԱՅԻ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐՈՒ

ԱՐՏԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

լաւագոյնը ըլլալու համարը կը վայելին 35 տարիէ ի վեր :

Դիմել

206-29, ԵՔԵԻ Զարբ, Մահմուտ Փաւա, Կ. Պոլիս



ՌՕՍԻԱ — ROSSIA



ԱՊՍԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀՐԴԵԼ, ԿԵԱՆՔ, ՓՈԽԱԴՐՈՒԹԻՒՆՔ, ԱՐԿԱԾԻ

Ընկերութեան զրամագլուխը, ամբողջապէս վճարուած	10,667,667 ֆրանք
1901 տարւոյ մէջ գտնուած տպահրապարակներու ու տուրս	54,000 000 »
Երաշխաւորութեան գումար	122,000 000 »
Ապահովագրեալներուն վճարուած գումար	249,400 000 »

Կեդրոնացեղի, Ղալաքիոյ քաղաքին վրայ, Մահմաւան հին տեղը

Ընդհ. ՔՔԵԻ
Ա. ՀԻԻՐՄԻԻԶ

Ընդհ. Գործակալ
ԹԷՈՏՈՐ ՌԷՔԷԼ

ՄԱՍԻՆ

51^{րդ} ՏԱՐԻ

— 19 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1902 —

ԹԻԻ 42

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Կլիկիոյ նորոգելու Կաթողիկոս (Խմբագրական) : — Դրախտական . Նոր հրատարակութիւններ .
Ս. ԱՆԴՆԱԿԱՆ : — Մեր բարեբեկ . Ճշմարիտ սերը . ԳՐԻԶԱՆԹԷՄ : — Մասուցում (Բանաստեղծութիւն) . Վ. Տ. : — Դաւառային գրականութիւն . «Ծաղկոյն» . ԳԵՂԱՄ : — Ժողովրդային տիրեցներ . Ե. ԴԱՐԲԻՆՆԵՍ : — Երեւ. աղջիկներ . ԼԷՈՆ ԿԱՆՏԻՅՕ : — Յուշեր :

ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ

ԱՄԵՆ, Տ. Տ. ՍԱՀԱԿ ՍՐԲԱԶԱՆ՝ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ

Կլիկիոյ Կաթողիկոսական ընտրութեան գործադրելի արդիւնքը , որ ծառայութեան երկուշաբթիի օրաթերթերուն միջոցաւ՝ Ատանայէն թէ՛ Պատրիարքարան և թէ՛ Խմբագրութեանց հասած հեռագիրներով , ամբողջ հայ մամուլին և հայ համայնքին ուշադրութիւնը իր վրայ կեդրոնացուցած կը պահէ : Սիրուած և յարգուած եկեղեցականի մը՝ Ամեն. Տ. Տ. Սահակ Ս. Արքեպիսկոպոս Խապայեանի՝ 62 քուէներով միաձայնութեամբ Կլիկիոյ Կաթողիկոս ընտրուիլը անխառն ուրախութիւն պատճառեց Կ. Պոլսոյ մեր եկեղեցական ու աշխարհական ամէն դասակարգերուն մէջ անխորի , ինչպէս պատճառած է նաև Կլիկիոյ բոլոր թեմերուն մէջ : Ոչ նուազ անկեղծ ու սրտագին եղած է այս բերկրալի տպաւորութիւնը Երուսաղէմի Միաբանութեան համար որուն պատկառելի մէկ անդամը՝ լուսարարապետ Սրբազանն է որ կը կոչուի հովուապետական պաշտօնին :

Ամեն. Օրմանեան Ս. Պատրիարքը , որ փութաց շնորհաւորական առաջին հեռագիրն ուղղել նորընտիր Ս. Կաթողիկոսին , շեղմագին խնդրութիւն արտայայտած է՝ երկարժամանակեայ խնդրոյն այս բարեբաւարիկ վերջաւորութեան համար , որ կը պսակէ նաև իր և Կեդր. Վարչութեան տարիներէ հետէ նուիրած աշխատութիւնները՝ արժանաւոր Կաթողիկոս մը բազմեցնելու համար Կլիկիոյ Աթոռին վրայ , բարեհաճ հաւանութեամբ Կայս. Կառավարութեան :

Շնորհաւորական հեռագիրներու և նամակներու անընդհատ շարք մը կ'ուղղուի այս եօթնեակի սկիզբէն ի վեր Երուսաղէմ , նորընտիր Ս. Կաթողիկոսին , մինչ լրագրութիւնը լայնօրէն բացած է իր էջերը կենսագրական յօդուածներու , համակրալից խմբագրականներով որոնք կը համապատասխանեն հանրային զգացումին ու ակնկալութեան :

Մասիսի Խմբագրութիւնն եւս կը փութայ իր անկեղծ խնդակցութիւններն ու սրտագին բարեմաղթութիւններն ուղղել հրապարակաւ Ամեն. Տ. Սահակ Ս. Կաթողիկոսին :

ՍԱՀԱԿ ԿԱԹՈՂԻԿՈՍ

— 000000 —

Պեճ ԷՆԵՖ ՏԵՍՆԵՐ ԿՐԿՆԵՐՈՒ ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ԱՅՈՒՆ ԸՆԴԱՐՃԱԿ ԺԱՏՈՐՈՒՔԻՆԵՐԸ ՉՈՐՈՐԱՔԵՐԵՐԸ ԲՐԱՏԱՐԱԿԵԾԻՆ ԸԱՔՐՈՒՍ ՄԷՋ, ԿԻՐԻԿԻՈՅ ԸՈՐԸՆՏԻՐ Ս. ԿԱՐՈՂԻԿՈՍԻՆ ՎՐԱՅ: ԼԱՆԱԳՈՅՈՒՆ ԿԵՐԱՎՈՂ ՎԱՏԿԵՐԱԳՈՒՆԵԱԾ ՎԵՐԻՔԻ ԸՂԼԱՆՖ Ն. ԱՄԵՆԱՎԱԿԱՏՈՒՆԻՔԻՆԸ՝ ԱՐՏԱՏԱԿԵՐՈՂ ԱՐԵՆԵՅԻՆ ՈՒ ԲԻՋԱՆԴԻՈՆԻ ԵՐԵՖԵԱՔԻՐԻ ՕՐՈՒԱՆ ՔԻՆԵՐՈՒՆ ԽՄԲԱԳՐԱԿԱՆՆԵՐԸ ՄԷՅ ՄԷՅ ՄԱՍ, ՈՐՈՆՖ ՉԻՐԱՐ Կ՝ԱՄԲՈՂՉԱԳՆԵՆ՝ ՆԵՐԿԱՅԱԳՆԵՐՈՒ ԲԱՄԱՐ Տ. ՍԱՀԱԿ Ս. ԿԱՐՈՂԻԿՈՍԸ ԻՐ ՆԵՐԲԻՆ ՈՒ ԲԱՆԵՐԱՅԻՆ ԿԵԱՆՖԻՆ ՄԷՋ, ԻՐ ՖԻԳՐԻԿԱԿԱՆ ՈՒ ԲՈԳԵԿԱՆ ԸՆԴԵՊԻՏՈՒՆ ԳԻԾԵՐՈՒՆ ՄԷՋ, ԻՐ ԵԿԵՂԵՏԱԿԱՆԻ, ՈՒՍՈՒԳՅԻ, ԲԵՂԻՆԱԿԻ, ԲԱՐՈԳՅԻ ԵՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՐԴՈՒՔԱԳՐԱԿԻՄԻ ԲԱՆԳԱՄԱՆԸՆԲԵՐՈՂ ՈՒ յԱՏԿՈՒՔԻՆԵՐՈՂ:

Հա՛րկ է անգամ մըն ալ կրկնել թէ Երուսաղէմի Լուսարարապետ Սրբազանը — այժմ Կաթողիկոս Կիրիկիոյ — միաձայնութեամբ ընտրուելու եւ արտայայտուող անխառն գահունակութիւնը առաջ բերելու իրական արժանիքով օժտուած եկեղեցական մըն է, եւ թէ զինքը թէ՛ մօտէն՝ անձամբ ճանչցողները եւ թէ՛ հեռուէն՝ համարուող ճանչցողները հաւատարապէս պատկառելի գաղափար մը կազմած են իր վրայ, եւ արդարեւ, Նորին Սրբազնութեան անձին գլխաւոր յատկանիշներն են՝ հայ եկեղեցականի վայել լըջութիւնն ու ծանրախօհութիւն, ուսումնասէր ու աշխատասէր ոգի մը, նախանձախնդրութիւն կրօնային կարգուսարքերու եւ աւանդութեանց, եւ ամբաստիր կեանք մը՝ պատանեկութեան հասակէն — երբ արեւդայութեան կոչուեցաւ — մինչեւ հասուն տարիքը՝ ուր կը կոչուի Կաթողիկոսութեան, Սոյ կրօններկու տարուան չըջանը — 1870էն մինչեւ 1902 — Սահակ Սրբազան բոլորած է Երուսաղէմի վանական միջնորդարին մէջ, ինքնամիօփ աշխատութեամբ ու անտիճանական յառաջդիմութեամբ, վարելով Ժառանգաւորաց վարժարանի տեսչութիւնը եւ ուսուցչութիւնը, հեղինակելով դասաղբեր եւ ուսումնական ու

կրօնական երկասիրութիւններ, վարելով հովուութիւնը զանազան ուխտատեղիներու եւ քարոզելով պիւժարօգուտն, հաւատարիմ անձնուէր միաբան հանդիսանալով իր ամէն արարքներովը՝ Լուսարարապետութեան փափուկ ու կարեւոր պաշտօնին արժանի գատուելու աստիճան:

Երուսաղէմէն դուրս, բաց ի իր ծննդավայրը՝ Խարբերդ՝ կատարած մէկ ուղևորութենէն, 1880ին, յիշատակելի են իր նուիրակութիւնը Կովկասի մէջ, իր այցելութիւնը Էջմիածին, իրեւ Երուսաղէմի պատուիրակի Հայրապետական ընտրութեան պահուն եւ 1900 — 1901ին իր կրկին պատուիրակութիւնն ի Սիւս, որոնց յիշատակը դեռ թաղմ է մտքերնուս մէջ:

Պարզասէր ու սակաւապետ, ինչպէս ամէն միաբան Երուսաղէմի, Սահակ Սրբազան իր Լուսարարապետի պաշտօնին պարտականութիւններէն դուրս ունեցած ժամանակը կ'անցընէ իր վանականի խցիկին մէջ, կարգալով, զրկելով, ուսումնասիրելով, Անսխիւտութիւն՝ իր նիստուկացին մէջ եւ նահապետական իր ճաշակներուն մէջ, Կիրիկիոյ նորընտիր Կաթողիկոսը առաջին երեւոյթով ու առաջին տեսակցութեամբ խորունկ ապաւորութիւն մը կը թողու իրեն մօտեցողներուն վրայ. նոյն իսկ զինքը չի ճանչցող մը, անձամբ մը, որ դէմ յանդիման դանուէր վարդապետի մը պէս սեւ սքեմ հագած այդ պարզ եկեղեցականին, եւ ունկնդրէր անոր լեցուն ու սրամիտ խօսակցութեանը, պիտի կոտէր իսկոյն թէ հայ կղերին կարկառուն դէմքերէն մէկուն մէջ բան մը կայ որ հին ժամանակներու եպիսկոպոսները կը յիշեցնէ, — ծերունագարդ մը չըլլալուն հակառակ, — եւ իր խրոխտ զինադիրները կը յայանեն հոգեկան կորով մը ու ճարտար միաք մը՝ այդ պարզուկ եպիսկոպոսին մէջ:

Երուսաղէմի Ս. Պատրիարքին ու Միաբանութեան համար սրճան ցաւ մը պիտի ըլլայ բաժնուիլ Լուսարարապետ Սրբազանէն ու զրկուիլ անոր գործակցութենէն, նոյնքան ուրախատիլ ու պատուարեր է որ իրենց հոգեւոր եղբայրակիցը կը կոչուի Կիրիկիոյ Կա

թողիկոսութեան , ուր պիտի նդառաւ նաեւ վառ պահելու Երուսաղէմի սէրը ջերմեռանդներու սրտին մէջ : Ս. Յակոբայ վանքը եթէ նապակեալական ու հոգեւոր ընտանիքի մը համայնապետները կը ներկայացնէ իր ամբողջութեամբ , իր զանազան ճիւղերուն ու բաժանումներուն մէջ մարդարան մըն է քաղաքութեան , հոյութեան եւ վարչական հմտութեան : Եւ Սահակ Սրբազան , զօրաւոր սիւներէն մէկը այդ կրօնային մեծ հաստատութեան , միմիայն աղօթելով ու քարոզելով չէ որ անցուցած է իր կեանքին երսուներկութեան շրջանը Սիօնի բարձունքը . այդ շրջանը որքան Վանքին օգտակար՝ նոյնքան բնամաւոր եղած է իր սուր մտքին ու աշխատասէր անձին համար , որոնք եկեղեցական գործերու խորին հմտութեան մը կը միացնեն վարչական գործերու խորին հմտութիւն , որոնց շնորհիւ Կիլիկեցիները վստահ կրնան ըլլալ իրենց վանքերուն , եկեղեցիներուն ու դպրոցներուն բարեգաղութեանը ու դարգացմանը , իրենց հոգեւոր հովուութեանց գործերուն աւելի բարւոք մատակարարութեանը՝ այն հոգածութեամբ ու ձեռնհասութեամբ որոնք Երուսաղէմի կարող միաբաններուն յատկանիշը կը կազմեն :

(Արեւելք)

Տ. Ա.

Տ. Սահակ Սրբազան , Երուսաղէմի Փոխանորդ Տ. Գէորգ Սրբազանի եւ Երեւմտից Տեսուչ Տ. Ղեւոնդ Վարդապետի հետ , Երուսաղէմի Վանքին ներքին ու արտաքին վարչութեան հոգին է տարիներէ ի վեր : Իր անձնական նկարագրով , Տ. Սահակ Սրբազան քաջողջ գաւառացիի մը կազմուածն ունի , աւելի բարձրահասակ քան միջահասակ , ընչային-մաղձային խառնուածքով , որ դէմքին թուի երանգ մը կուտայ , եւ խոհուն , լուրջ երեւոյթ մը : Առնական կեցուածք մը ունի , եւ ընտանիքի Հայ եկեղեցականի տիպար մըն է , որուն քով քաղաքացիական կնատի փոփոխութենէն հետք մը անգամ չկայ : Իր ընկալած տրամադրութեանը հետ միայնալով , տարիքն ու մտաւոր աշխատութեան եւ պաշտօնական պատասխանատուութեան հոգերն իրեն տուած են պատկառելի եւ ազդեցիկ


տեսք մը , զօր թաւ , առնական ձայնի շեշտ մը ա՛լ աւելի ապաւորիչ կ'ընծայէ : Իր ճշգրտարոյն մէջ դտնուելով , խեղալ տարիքն ունի այն բարձր պաշտօնին համար որուն ընտրուեցաւ . — ո՛չ եւս երիտասարդ , որուն անխոհեմութիւն ըլլար վստահիչ հոգիներու այնքան մեծ հոգ մը , ո՛չ ալ անկար եւ հիւսնադատ ծերունի մը , որ անբաւական ըլլար նիւթական ու բարոյական վերաշինութեան աշխատութիւններուն , որուն կը կարօտին Կիլիկեան թեմօրայք : Լիուլի կորովն ունի աշխատութեան տարիքին , եւ հասուն փորձառութիւնն ու խելահասութիւնը եկեղեցական բարձրագոյն պաշտօնէութեան : Առաքելական աթոռի մը պատկառանքն ու շահերը պաշտպանելու իր հոգածութեամբ , վարժուած է մեծ Աթոռի մը վրայ իր զիրք բռնելու , եւ իր պարտաւորութիւնները խղճի մտօք կատարելու : Իր պերճախօսութիւնն առատահոս տեսակէն չէ , բայց իր քարոզները խոհուն , լեցուն , հիւթալից են , եւ ինչպէս ինք աստիճանաբար պիտի վարժուի իր թեմականներուն մեծ մասին մայրնի լեզուն եղած թուրքերէնին առաւել վարժ գործածման , իր հոգեւոր հօտն ալ տարուէ տարի աւելի կը հասկնայ Հայ լեզուն , շնորհիւ դպրոցներուն որոնք ա՛մ ըստ ամէ կ'աւելնան , Կայսերական թոյլտուութեան օգնութեամբ , ինչպէս նաեւ Կիլիկիոյ մէջ թափանցող քաղաքակրթութեան աստիճանաւոր բերմունքով : Հանրային-վարչային գործերու իր հմտութեամբ , հաւասարէն ընծայած է համերաշխ գործունէութեան Պատրիարքարանի հետ , որով յոյս առած է որ Սոյ Աթոռին եւ Պաշտօն Պատրիարքարանին միջեւ համաձայնութեամբ պիտի կարգադրուին առկա թեմական գործերը եւ յարաբերական ամէն հանգամանքները որոնք կը կարօտին կանխահոգ անօրինութեան : Տ. Սահակ Սրբազանի համար զնահատելի առաւելութիւն մըն է որ հաւասարապէս կը վայելէ Տէրութեան վրասահութիւնը , ինչպէս երեւցաւ կրկին ընտրութեանց առթիւ , եւ Ազգին վստահութիւնը , որուն գեղեցկագոյն ապացոյցը պիտի մնայ միշտ՝ առ յաւէտ յիշատակելի իր ընտրութիւնը քուէից միաձայնութեամբ , զգացումի ինչպէս

եւ թիւի պերճաբարառ համերաշխութեամբ
եւ անամեղի ստուարութեամբ : Ականատես
ու գործակից այն վերաշինութեան աշխա-
տանքներուն որոնց շնորհիւ երուսաղէմի Ա-
թոռը նիւթական անկեալ վիճակէ մը արդի
գոհացուցիչ բարձրութեան հասաւ , Տ. Սա-
հակ Կաթողիկոս պիտի ըլլայ նաեւ : Վերաշի-
նող մը իր Աթոռին համար , Կոչումով եւ
գլխավորմով ուսուցիչ , լաւագոյն կրթիչը ,
մարզիչն եւ ուսուցչապետը պիտի ըլլայ իր
մեծագոյն թեմերուն : Եւ մաքի գործիչ ,
գարգացեալ մարդ , հեղինակ եւ արտագործ
գրիչ , նախանձախնդիր պիտի ըլլայ իր Աթո-
ռին շուրջը կազմակերպելու հոգեւոր եւ մտա-
ւոր կեանք մը , Դպրեմանք մը ունենալու ,
ժիր եւ ուսեալ մշակներ պատրաստելու իր
Եկեղեցւոյն , եւ օրին մէկը դասուելու : այն
երանելի Հայրապետներուն կարգը , որոնք
Կրիկիոյ Աթոռը թէ՛ հոգեւոր եւ թէ՛ իմա-
ցական կեանքի-կեղրոն մը հանդիսացուցին ,
եւ անմահ անուն ժողովուրդեցին Եկեղեցական
Տարեգրութիւններուն մէջ :

(Բիւզանդիոն)

Բ. Վ.

ԳՐԱԽՕՍԱԿԱՆ



ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ



1. Աշխարհագրութիւն պատկերազարդ. Տարական Ա.
եւ Բ. տարիներու : Արթուր Բ. Հայրիկեան . տպ. Ն. Կ.
Պէրպէրեան . 1902 . — 2. Պատկերազարդ նոր Աշխար-
հագրութիւն . Բ. մաս . աշխարհագրութիւն Օսմանեան
Կայսրեան . Հրատ Ս. Խանճեան . Նախակրթութեան
դասընթացք : Կ. Պոլիս . Գրատուն Նշան-Պապիկեան . 1902 .
— 3. Առեւտրական-Տնտեսական աշխարհ . Պատրաստեց
Կ. Ս. Թուխմանեան . Իզմիր Տպ. Մամուրեան . 1902 :

Այլեւս վարժուեցանք իրր նոր հրատա-
րակութիւն գրկաբաց ընդունելու դասագիր-
քերը , որովհետեւ ձեռնարկող չիկայ այն տե-
սակ երկասիրութեանց որոնց նպատակը ըլլայ
հեղինակի գրականին օգուտ չունեցող բաներ
մը արտադրել :

Բայց ինչ որ ամէնէն տարօրինակ է ,
ղիպուածին այն խաղն է որով աշխարհա-

գրութեան հեղինակները խօսք մէկ ըրածի
պէս գրեթէ միեւնոյն ժամանակ ասպարէզ
կ'ելլեն , իբր թէ հայերէն աշխարհագրութիւն
գոյութիւն ունեցած չըլլար :

Չեմ գիտեր թէ պէտքի տեսակէտով որ
առտիճան անհրաժեշտ պէտք մը կար աշխար-
հագրութեան դասագիրքերու , բայց ամէն
պարագայի մէջ սա ճշմարիտ է որ աշխար-
հագրութիւնը շատ անտեսուած ճիւղ մը չէ
մեր դասագիրքերու աշխարհին մէջ :

Աշխարհագրութիւնը անպէտ ուսում մը
չէ , բայց դասագիրքերու այսքան առատու-
թիւն մը կ'արդարանայ արդեօք : Դալով
նպատակի ընտրութեան՝ Հայրիկեանի ամբողջ
չրջան մը պատրաստած ըլլալու յայտարարու-
թիւնը եւ Խանճեանի մեղի համար ամէնէն
կարեւոր երկրի մը ուսումնասիրութեան նուի-
րած ըլլալու յատկանիչը իրենց գրքին կու
տան մասնաւոր առաւելութիւններ որոնք մէկ
առտիճան մը կ'արդարացնեն իրենց երեւումը :
Իսկ Թուխմանեանի գործը նպատակի տեսա-
կէտով այնքան օգտակար եւ այնքան շահե-
կան է որ ոչ ոք պիտի հերքէր անոր նը-
պատակին ընտրութեան շահեկանութիւնը , եթէ
երբեք յաջողած ըլլար գործադրութեան մէջ՝
ինչպէս շատ անշան թերութիւններով յա-
ջողած են առաջին երկու դասագիրքերուն
հեղինակները :

Այս ընդհանուր յատկանիչներէն յետոյ պէտք
պիտի ըլլայ որ իւրաքանչիւր գրքին առանձ-
նական արժէքին վրայ խօսինք համառօտ
այնքան՝ որքան կարելի է :

Ա.

Հայրիկեան , ինչպէս իր առաջաբանին մէջ
կ'ըսէ , իր դասագիրքերը պատրաստած է Սէն-
եէթի եւ Ֆոնտէնի հետեւողութեամբ : Մէ-
թոսի տեսակէտով աշխարհագրութեան պէս
դաս մը հաճելի ընելով ուսուցանելու եղա-
նակը ընտրած է եւ այս տեսակէտով գրեթէ
յաջողած է , պիտի կարենանք ըսել :

Եթէ այս ուղղութեամբ աւելի ընդարձակ
աշխարհագրութիւններ եւս գրուէին , շատ
պիտի գիւրանար աշխարհագրութեան ուսու-
ցումը , որովհետեւ տղաք շատ անգամ աւելի
իրենց սորվածին անմիջական օգուտը տեսնել

կուղին եւ այս ընտրուած մեթոտը կարծես աղոց այդ հակուսին յապուրդ կու տայ երբեմն երկրորդական մանրամասնութեանց իջնելով, ինչ որ աղան կը հետաքրքրէ՝ միանգամայն բուն հիմնական նպատակին ալ կը ծառայէ պղտիկ պատմութեամբ մը չորս-հինգ քաղաքի անուն ալ գրեթէ ակամայ սորվելով։ Մասնաւորապէս շնորհաւորելի են աշխարհագրական ընթերցումները որոնք նորութիւն մըն են մեթոտի տեսակէտով, բայց դժբաղդաբար յաճախ ընտրուած կատրոններն են որ անյաջող են։

Անոնցմէ իբր նպատակայարմար եւ խիստ խալտիսլ միակ հատուած մը կար «Կ. Պոլսէն Ռոտոմթօ ցամաքի ճամբովը»։ Իսկ «Վիէիճքայի աղահանքը» կրնայ յարմար կտոր մը համարուիլ։ Միւսները շատ անգամ անյաջող եւ փոփոխութեան կարօտ են։ Անոնցմէ մասնաւորապէս «Գիւղացիի մը նախակը Բարիկի մասին» (էջ 38) հատուածը նոյնիսկ դաստիարակութեան ոգւոյն հակառակ է։ Տղան պէտք չէ խորշի քաղաքակրթութեան ընկնած միջոցներէն, եւ անոնց արգասիքը եղող կեանքէն ու միջավայրէն։ Գիւղը գոյլարանել քաղաքին դէմ՝ ճշմարիտ սկզբունք մը չէ։ Դէպ ի լաւագոյնը ձգտելն է դաստիարակութեան նպատակը։ Այդ ոգին պէտք է չեղծել աղուն եւ ոչ թէ հակառակը ըլլալով լաւագոյնէն սոսկացնել։

Աշխարհագրական ընթերցումներէն դատ պատկերներու ստորեւը դրուած տեղեկութիւններ մանուկներու մտքին վրայ ներգործող տպաւորութիւն մը ընելու սահմանուած են, բայց դժբաղդաբար պատկերները շատ անխնամ են՝ հակառակ իրենց նպատակայարմար ըլլալուն։ Այս թերութիւնը աւելի տպագրիչին կը պատկանի քան թէ հեղինակին՝ բայց հեղինակն ալ մէկ աստիճան մը աւելի խնամալ ընելու կրնար ջանալ։

Հայրիկեան իւրաքանչիւր դասին վերջը հարցումներ ալ դրած է։ Անոնցմէ ոմանց պատասխանները գրքին մէջ չեն դրուած որպէս զի տղաք մտածելով՝ գտնեն դասի կամ պարապոյ ժամերուն մէջ»։ Սկզբունքով համալիտ ենք այս դրութեան, բայց չենք կրնար ալ անուշադիր անցնիլ այնպիսի հար-

ցումներու վրայէ որոնք աղան շփոթեցնելու եւ անոր ուղեղը չարչրկելու միայն կը ծառայեն։ Այսպէս, հաշիւ արեւելքը, արեւմուտքը, հիւսիսը եւ հարաւը ծանօթացուցած է՝ երբ կը հարցնէ աղուն «խիտ անտառի մը մէջ, հորիզոնին չորս կողմերը ի՞նչպէս որոշելու է» (էջ 8)։ Հարցումը այնպէս կ'երեւայ ինծի թէ անյարմար է։ Նոյնպէս (56 էջ) տեղ մը կը հարցնէ «Մովսրէ հեռու երկրի մը մէջ ի՞նչպէս կ'ազմուած է այս (Վիէիճքայի) ընդարձակ աղահանքը» մինչդեռ հատուածին մէջ ատոր որ եւ է ակնարկութիւն չկայ։ Տղան ատոնց մէջէն ապահովարար չպիտի կարենայ ելլել եւ պիտի մտածէ առանց արդիւնքի մը հասնելու։ Գալով ուսուցչին, եթէ ինք ալ բացատրէ՝ բաւական դժուարութիւն պիտի քաշէ, որովհետեւ հարցումին պատասխանն ալ աղոց մտաչելի չէ։

Նոյնպէս փոքր աղոց համար աշխարհագրութեան դասի ատեն սիրոյ վրայ խօսիլը քիչ մը տարօրինակ թուեցաւ ինծի։ Ի՞նչ է ճշմարիտ սերը, խօսիլ անկեղծ սիրոյ վրայ, մայրական, եղբայրական, ընտանեկան եղև. կը յանձնարարէ (էջ 105) ինչ որ որ եւ է կերպով դասին հետ առնչութիւն չունի։ Եւ ի՞նչ պէտք խեղճ պատիկները հոգեբանական փափուկ հարցերով զբաղեցնել։ Անոնք իրենց օգտակար եղող ծնողքներին սիրել գիտեն եւ ասիկա արդէն բաւական է։

Փոխանակ ուսուցչիը մղելու որ սիրոյ վրայ խօսի, պէտք է մղել զայն՝ դասը կարելի եղածին չափ գործնական ու ըմբռնելի ընել տալու։ Այսպէս (էջ 8) ուսուցչին փորձով հաստատել յանձնարարուած է դասին ոգին, ինչ որ լաւ դրութիւն մըն է։ Նոյնպէս փորձառական եւ գործնական է գիւղաքաղաքին քարտէսը հանելու եւ ցոյց տալու դրութիւնը (էջ 12) որ կրնայ աղուն մտքին վրայ ներգործել։

Վերջացնելէ առաջ քանի մը պզտիկ դիտողութիւններ ունինք գորս կը ներկայացնենք։ «Եւրոպայի բնակիչները կը վերաբերին ճերմակ ցեղին եւ բաժնուած են չորս մեծ խումբերու» կ'ըսէ եւ այսպէս կը դասակարգէ զանոնք՝ Թուրքերը, Սլաւները, Լատինները եւ Գերմանները։ Այս դասակար-

գութիւնը եւ բացատրելու եղանակը բոլորովին սխալ է : Բոլոր Եւրոպայի բնակիչները սպիտակ ցեղին չեն պատկանիր : Մաճառք , Ֆինլանտացիք , Լատինացիք կը պատկանին Մոնղոլեան կամ դեղին ցեղին :

Աւելի ճիշտ կ'ըլլար ըսել թէ Եւրոպայի բնակչութիւնը կազմուած է Հնդեւրոպական , Սեմական , Թուրանեան եւ ուրիշ ցեղերէ :

Նոյնպէս ղիտել կուտանք թէ Միֆայեղ Անկեղոս եւ գլոխ (քաղաք , Բարեյուսոյ երկիր) անտեղի ձեւեր են : Միֆեղ Անժեղո եւ Քաք պէտք է ըսել :

Վերստեստրիւսն ըսող չեմ գիտեր ինչու ինծի շատ անախորժ թուեցաւ : Մեր դպրոցականութեան չրջանին պարզապէս քաղաքացիականութեան չրջանին պարզապէս քաղաքացիականութեան կը գործածէինք , եւ ես այնպէս կը կարծեմ թէ մինչեւ հիմա այդ բացատրութիւնը գործածական է դպրոցներու մէջ :

Աւստրալիա 1900 էն սկսեալ Անգլիոյ վերաբերելէ չէ դադարած , ինչպէս կը ցուցնէ Հայրիկեան : Անգլիական գերիշխանութեան եւ հովանաւորութեան տակ՝ պատասխանատու վարչութեամբ տեղական ինքնորէնութիւն մըն էր միայն Հասարակապետութեան կազմութիւնը , որ կ'երեւայ թէ չփոթուած է :

Այս մէկ քանի թերութիւններովը հանդերձ , այս դասագիրքը՝ հակառակ իր փոքր ծաւալին՝ օգտակար իրնայ ըլլալ դպրոցներու համար :

Ս. ԱՆԳԵԳՆՍԵ

Ստիպողաբար կը խնդրենք Մասիսիայն գաւառային գործակալներէն որոնք տակաւին առկախ հաշիւ ունին թերթիւ Խմբագրութեան հետ , որ հաճին փութով կատարել մնացորդ բաժանորդագրիներու գանձումը եւ ղրկել մեզ : Նոյնպէս կը խնդրենք գործակալ չի գրուած քաղաքներու բաժանորդներէն , որ ուղղակի մանտա-բօսթով մը կամ նամակադրոշմով ղրկեն իրենց բաժանորդագրին :

ՄԵՐ ԲԱՐՔԵՐԷՆ

ՃԵՄԱՐԻՏ ՍԵՐԸ

Գրիգոր Քաշմիրեան . — Հարուսի գաւալ blanc bec մը , 35 տարու : Չարսին մանիթաբուրանի : Երկու անգամ Մանչեսթր գացած է եւ Ֆրանսերէն կը խօսի սպանիական կովի մը պէս : Պոքերին շինել կուտայ իր հագուստները եւ ըմպելի չի գործածեր : Այնքան կծծի եւ որ կարծես երկու հարիւր հազար ոսկի ունի : Կարմիր այտեր եւ սեւ ոլորուն պէխեր ունի , գաւառացի շիֆ երիտասարդի մը պէս , իր ամբողջ Ֆիզիքական առաւելութիւններն են ասոնք : Իր քաղին վարժարանին հոգաբարձու է եւ հակառակ զլսարկ դնելուն՝ ասոր գործածութեան կերպը չգիտեր : Ասոնց մէկ գաս բարոյական պակասութիւններ չունի : Իշխիզար մանչու մը համբաւ շինած ըլլալուն , հազար ոսկի դրամօժիտով Պետրոս աղային աղջկան հետ կ'ամուսնանայ :

Վերոնիկ Սիրվերեան . — Պետրոս աղային աղջիկը որ Գրիգոր Քաշմիրեանի կիներ պիտի ըլլայ : Սիրուն արարած մը : Հարուս՝ ծննդեամբ , մագերով եւ կուրծով : Հոմէն օրջանաւարտ . ձեռքը շատեր խնդրած են , բայց բաղդը Գրիգորինն է եղեր : Պչրասեր ու խելացի է Վերոնիկ : Շատ հաւնուած օրիորդ մը վերջապէս : Գրիգորին հետ կ'ամուսնանայ հօրը հրամանը յարգելու համար :

(Տեսարանն է Զորայտակ ամուսինն Ննջանէնէնի մէջ զորայտակն արաջին քիշերը)

Քառակուսի սենեակ մը որուն մէկ անկիւնը զետեղուած է պղնձե մահնակալը , հարսի պէս շփուած : Մեղմ լոյս մը պատերուն վրայ սուրներ կը գծէ : Հարսանեկան ննջասենեակի մը վայելուչ նոր նոր կարասիներ ասղին անդին :

Capitoné dormeuseի մը վրայ , հարսին ֆողը , ձեռնոցները եւ հողմահարը՝ պատշաճ անհոգութեամբ մը իրարու վրայ նետուած : Թիկնաքոռի մը վրայ գեղեցիկ փութկոտութեամբ մը նետուած խնկաբոյր ֆուրսէն : Ուրիշ արքայ մը վրայ անապարանով նետուած

ներմակ արջագգեսը եւ գետինը մոռցուած
քառքա ժիւթօնը : Հոս ու հոն պաքիսի ,
մեծախի եւ քանքիլի կուտակուամեր , մահ-
նակալին առջեւ ինկած զայգ մը ծնակապ
նարնջենի ծաղիկէ յօրինուած : Ամբողջ սեն-
եակին մէջ Լիւպէնի գրգռող հոտ մը : Սիրոյ
խորան մը վերջապէս ուր դեռ ողջակեզ չէ
մոտուցուած : Լուսիքն ամբողջ քանը մէջ :
Կես գիշերէն երկու ժամ ետք :

Գրիգոր . — Եթէ հարսնեւորները չամչնա-
լին մինչեւ աստու պիտի հասէին . . .

Վերոնիկ . — Enfin seuls !

Գրիգոր . — Թէյդէիս տունը պատկեր մը
կայ , տակը ըսածիդ պէս գրուած է : Ինչ է
նէ , Հիմայ ըսել է դուն իմա ես . աչքերուս
չեմ հաւատար կոր . (Քէշ Տը Կէշ Բոքէշ Կէշ)
Ձեռ գիտեր , Վերոնիկ , որքան կը սիրեմ
զքեզ , իմին ազուոր Վերոնիս , հոգիս . . .

Վերոնիկ (Ժպտալէն) . — Իրա՞ն , շա՞տ կը
սիրես զիս :

Գրիգոր (Տէնդոս Գոնիսիս Եւ Եւրոպէ Եւրոպէ) . —
Հոգիս ալ աւելի , հաւատա՛ն . Կեանքիս մէջ
երբեք ոչինչ եւ ոչ ոք քեզմէ աւելի սիրած
ունիմ , թէ՛ք ըլլամ :

Վերոնիկ . — Հիմայ նոր եմք , ասանկ
կընես . վաղը , մէկալն օր , ով գիտէ ո՞ւր
տեղուանքը պիտի պաշտիս :

Գրիգոր . — Կէնճուածեան խէրը չի տես-
նամ , եթէ սրտանց չեմ սիրեր քեզի եւ կ'երդ-
նում որ մինչեւ ետքը աս ասանկ պիտի ըլլայ :

Վերոնիկ . — Երբի մարդ չէ՞ք մի , ամէնքդ
ալ ասանկ կ'ըսէք մինչեւ որ մեզ գլխէ
հանէք :

Գրիգոր . — Ինչո՞ւ ասանկ կը զուրցես ,
խուշո , գիտե՛ս իշտէ : Ինծի շատ աղջիկ
տունն ամմայ միշտ աչքս քեզի էր : Սա Վեր-
ոնիկ գիտես , իրաւ ազուոր է , հէ՛մ փարա ալ
ունէր , բայց մէկ թիւրիւ սիրտս չի տաքցաւ
վրան , դուն պաշխա ես , Վերոնիս , հրեշ-
տակա , նայէ՛ ես քեզի ինչ ազուոր օրեր պիտի
ընդունես : Եկող տարի Աստուած ուզէ նէ
քեզի հետս Մանչեսթըր պիտի տանիմ : Կա-
րելի է Բարիդէն ալ կ'անցնինք :

Վերոնիկ . — Ասանք բոլորն ալ խօսք են ,
Ամիս մը , երկու ամիս , անկից ետքը մեզի
պատուհաններու պէս կը գործածէք , ես գիտեմ :

Գրիգոր . — Ձէ՛ , հոգիս , ինչո՞ւ ասանկ
կը մտածես : Ընդհակառակը ես քու գերիդ
պիտի ըլլամ : Դուն պիտի հրամայես ինծի :
Մէկ ըսածդ երկուք չպիտի ըլլայ : Ունեցածս
չունեցածս ամբողջ քուկդ է . տեսնաս պիտի
Վերոնիկ (Աւելի Բոքէշ Եւրոպէ) . — Գրիգոր ,
չիտակ ըսէ , ինչմէ առաջ հիշ մէկը չե՞ս սի-
րած :

Գրիգոր . — Նայէ ինչ կը հարցնէ : Եթէ
ուրիշ սիրէի նէ , քեզի կ'անէի՞ :

Վերոնիկ . — Սուտ մի՛ զուրցեր , չեմ հաւ-
տար :

Գրիգոր . — Ինչ երբեք կ'ուզես նէ կը
հանեմ , ես Վերոնիկէս դատ պաշխա՞ն սիրած
չունիմ , Աստուած վկայ :

Վերոնիկ . — Ստախօս . սա էրիկ մար-
դիկը սուտ զուրցելէ ի՞նչ կը հասկնան , բա՛ .
դուն չէի՞ք քի անցած տարի Սաթենիկին հա-
մար խնկի կը կտրէիր կոր եւ եթէ 500 ոսկի
աւելի տային պիտի առնէիր :

Գրիգոր (Կեղծէ Ընդալ) . — Հիշ ալ ա-
սանկ չէ , անոնք աղջիկին ալ կ'ուզէին
կոր , բայց ես հոնտեղուանք չէի : Քեզի պէս
ազուոր աղջիկը դրած էքն . . .

Վերոնիկ . — Հայտէ , ասե՛ք կը հաւ-
տամ , ով գիտէ կարելի է խելքդ միտքդ դեռ
անոր վրայ է :

Գրիգոր . — Նայէ ինչ բաներ միտքէդ կ'ան-
ցունես . չէ , հոգիս , ես քեզնէ դատ , խաչոր ,
նէ՛ ուրիշ մը սիրած եմ , նէ՛ ալ պիտի սիրեմ :
Դուն իմ մէկ հատիկ Վերոնիկս ես , հէ՛մ , հի-
մայ ատենը դատար ասանկ բաներ զուրցե-
լու . . .

Վերոնիկ . — Ես ըսածս գիտեմ , բայց հոգ
չէ , քանի որ Աստուած ասանկ ուզեց . (Ինչ
Տը Եւրոպէ Եւրոպէ) ինչէ՞ն գիտեմ որ սրտանց կը
խօսիս կոր :

Գրիգոր . — Հիմայ բան մը պիտի ըսեմ
դուն ալ պիտի համոզուիս . զբո՞ւ ըսել կու-
տաս կոր ինծի : Իշտէ , երէկ հայրիկդ հազար
ոսկին չի առաւ , համբելն էքն երկու հատը
թէ՛ղալէ էին ամմա , խաթէրդ համար չի տես-
նալու զարկի : Տեսա՞ր հիմայ . . .

ՔՐԻՍՏՈՍԻՍ

ՄԱՏՈՒՅՈՒՄ

(ՍԻՐԵՐԴ)

Այժերս երկու բաժակներ են ոսկեղեն
Մինչեւ եզերք քու սեսիլովըդ լեցուն ,
Դրան ետեւ բարձրամասոյց ու վախճն
Դողդողագին՝ հասակիդ ներս մեներուն

Ըսպասելով . . . : Մտածումներս զոյգ կարգի
Վըրայ շարուած՝ անձայն աղօթք մը կ'ըսեն ,
Մինչդեռ տեղանքս՝ կոտորեմով ամենի
Դժուարագուստ մասաղի խոյ մ'ե անգեմ . . . :

Դժդաղդ մարմինքս ոտքիդ տակ քիչ յետոյ
Պիտի պառկի . . . : Զգայնութիւնս բռնկի
Պիտի յանկարծ , ինչպէս խառոյկ չոր փայտի

Նւ շամբուրին վրայ նայուածքիդ տեղանքս՝ խոյ
Դանդաղօրէն , հեռանալով ու անխընայ
Պիտի դառնայ ու նեղների ածխանայ :

Վ. Տ.

ԾԱՂԿՈՑ

(ԳԱՒԱՌԱՅԻՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ)

Բ.

1882 տարին առատաբոյս դարուն մը պար-
գեւած էր մեր սիրատարած գաշտին : Թփռոյ
ու պալարա խոտերը մշտադալար կը մնային ,
մինչեւ յունիս , մինչեւ յուլիս՝ լիայագուրդ
սնունդ հայթայթելով տաւարներուն եւ ոչ-
խտրներուն : Վերջինները այնքան պարար-
տացեր էին , որ եթէ առնալիկայք ուզէին , օրը
երեք հեղ կ'ընային կուղային . բեղմնաւոր բու-
սականութիւնը կաթի ամբարներու վերածե-
ր անոնց ստինքները :

Յուլիսի 27րդ օրն էր , նոր կը սկսէր կէս
օրը , արեւն երկնուց խամամ կամարին վրայ՝
տաք ու առթի մէջ էր , կարծես կ'եռար , այլ
սակայն Մովսիսի մօրենիին նմանակ՝ չէր վա-
ռեր : Ամէն կէսօր ոչխարակիթ կար Արածա-
նիին զով եղերքները , պէրաւոր կնիկներ՝
աիկ ու կ'ընայ ի շալակ կը մեկնէին գեղէն

ի պէր երթալու : Պէրաւորները՝ ինչպէս սո-
վորական է՝ կնիկ արմատէ էին : Գլուխ , մի-
ջավար կանայք , նոր հարսուէք , աղապ ,
հասուկ աղջկունք : Աննշան բացառութեամբ
գեղին ամէն մէկ տունը իր ոչխարն ու պէ-
րաւորն ունէր : Շատ հեղ պէրաւորներուն
կ'ընկերանան ոչխար չունեցողներն ալ , լոկ
զրօններու համար : Իրենց խումբին մէջ՝ աղ-
ղամարդ մի միայն իրենց հովիւն է , կնիկ
արմատին ամէնէն շատ ծանօթ ու մտերմ
դէմքը : Այնքան մտերմացած , որուն առջեւ
համարձակ են կանայք իրենց ամէն տեսակ
խաղ ու խնդուծին մէջ :

Հասած էին պէրաւոր , սկսած էր ոչխա-
րակիթը , որ Յ քառորդ ժամէն աւարտած ,
աիկեր , բղիկներ , կ'ընային լցուած ու կաղ-
ուած էին : Մեկնումի ժամը մօտ էր , կը
մնար մինակ , որ աղապ աղջկունք իրենց լո-
ղանքը կ'առարէին սրբաջուր Արածանիի ծո-
ցին մէջ : Աղջկներու համար առկա սովոր-
ական է , գէթ չարածը երկու երեք հեղ ,
մանաւանդ կիրակիներ : Նոյն օրը սովորա-
կանէն սաստիկ տոթ կ'ընէր , այնպէս որ գե-
ւէն դուրս եկած չողին՝ ա'լբիկ , ալբիկ օղին
մէջ կը բարձրանար : Աղջկները մինակ չի-
մնացին , կնիկներն էլ գացին անոնց երամին
հետ , Արածանիի ջրով զովանալու եւ հովա-
նալու , անոր ափուէքը եւ ծանծաղուանքը
հիւրընկալ էին այս տկար սեռին , որոնց վրայ
հետեւէն կը հսկէր սակայն հովուին արծուա-
րիբ աչքը :

Գեղին խորդեր , հոտաղներ պէրին ժու՝
ձկնկուլի պէտ՝ թէպէտ հետեւէն կը շարուէին
Արածանիի եղերքները , փուլերը , ուռնիներ-
բու շուքերը , թէ՛ ուղած առնն լողալու ,
մրցելու , եւ թէ՛ գէթ իրենց սիրածներուն
ձէնքը ու խաղերը լսելու : Նոյն օր՝ ոչխա-
րակիթէն վերջ՝ գեւ հինգ հոտաղներ հասեր
էին էն կողմերը , ուր պիտի ժողվուէին շա-
տերն էլ :

Արածանին իր կամկար հոտանքներուն մէջ՝
ամէն դասէ եւ ամէն տեսակէ լուացեողներու
ու լողացներուն յարմար վազուն աւաղաններ
ունէր , ո'րը խոր , անյատակ , ո'րը յորձա-
նուած՝ մարդահասակ մը , ո'րը ծանծաղուած ու
ծիծաղ , չա'տ չա'տ մէկ ծուռը ջուր : Ամէն

մէկ իւր յարմար ջուրը կը մտնէր : Կանանց դասին բաժինը ծանծաղումներն էին , այնքան նոսր , որ աւագն ու սլահանջը կը պըլպտային : Անոնք խումբ խումբ , իրարու ձեռք բռնած կը մտնէին ի ջուր , մէկ-երկու լոփ առած , ետ կուգային , տաք , ընտրուկ աւղնոցներուն մէջ : Կէս ժամէն թամամած էր լողանքը , ջուրէն ելած , հագուած էին , եւ ուռնիի փողիին վրայ իրար կը ժողվէին մեկնելու , երբ որ խոր ու թոնիր պտտնեալու վրայ ուր Արածանին կապուեալքն ու ժանդարի կը փէլփլայ՝ երեւցան հինգ հոտադներ , պառկած ջրին երեսը՝ երեքը թեւանի , եւ երկուքը գորտնուղով կը յառաջանային : Աղբիկներուն աէրը դէպ պերա տեղին կը բերէր զիրենք : Խօսք ըրեր էին , խօսք գրեր էին մրցումով կտրել , անցնիլ տարածուն Արածանին , որպէս զի կարենան իրաւամբ իրարմէ խել խորտարկները : Յառաջ կուգային սակաւ , տակաւ , ալիքները զանոնք իրենց վրայ բռնած՝ բաղերու երամի մը նման կը ցուցադէին կնոջական էս խումբին : Ալիքներուն ձիւնափայլ ծածանումը , լուղորդներուն շփրտոցը , հալա-հուլան բոլոր պէրաւորները ի տես հրաւիրեր էին : Հոտաղները որչա՞ծ էին գետը կտրել ճիշտ պէրատեղիին առջեւ : Տաժանելի պայքարի մը մէջ էին : Ջուրը խոր ու շատ կամկար էր հոն եւ հանդիպակաց ափունքին մօտ յորձանուտ : Աղբիկները աչքերով կը լափէին մատաղաշ փէհ-էփաները , միայն հովիւը անտարբեր էր , ու ոչխարները քոմելով՝ կը հեռանար արօտաւ վայրերը : Պահ մը հինգն էլ՝ հաւասար կը մշային՝ գլուխ գլխի տուած , քիչ մ'էլ , ահա ինչ որ թեւաթափ՝ օղիկ-օղիկ ետեւէ ետեւ կը ձգէին զիրար : Գետին լէնքը քանի մը դռնովարէ աւելի էր , մրցողները՝ մանուկ եւ անփորձ կորովով էնքան շտապեցին , որ դադրեցան ու թաշքեցան : Մօտիկցած էին սակայն յորձանուտին որուն հուժկու հոսանքէն չորսը քշուեցան ծանծաղումներու մէջ , հինգերորդը մինակ մնաց , որ կամակոր յամուրթեմբ կը մաքառէր : Մաքառեցաւ , մինչեւ գլեց յորձանքին մէկ բաղովը ու մօտիկցաւ ափունքին : Մեղքոնէր էր , ճանչցան զինք : Ամէն կողմէ՝ կնիկ-

աղջիկ ձէնքեցին ու պօռացին — Ղուրպան , Ղուրպան թեւ թիկունքիդ . . .

Կարծես սրտապնդուեցաւ : Երկու ուժգին թեւանի ալ , երբ ինքզինք ձգեց զիմացի ափունքին մօտ , բայց ափսոս յուսախաբու թեւան , փուլին ստորոտէն գալարող յորձանքը ետ , ետ՝ ջրերուն մէջ դարձուց զինքը : Էլ ուժասպառ ու ջնջնուած էր : Գերադոյն ճիգ մ'ըրաւ վեր բռնելու համար զինքը , բայց փետրիփնուկ կռնիկ նման՝ անզօր մնաց , իջաւ ու ծածկուեցաւ ջրով . . .

«Հէ՛յ վա՛խ , հէ՛յ վա՛խ» ճվաղին բոլոր կնիկ արմատները , սրտախորով վայնասունը ծածկեց օդն ու ալիքը ու հասաւ չոր Մեղքոնին ականջը , եւ ահա հոգեքակման սխալի ուժկուութեամբ վեր թռաւ ջրին երեսը , ու կրկին վար իջաւ , ծածկուելով աչքերէ :

Անկարագրելի յուզում ու կոծում կանանց դասին մէջ . . . Հովիւը մեկներ էր , չորս լուղորդները չա՛տ հեռու քշուեր էին ալիքներէն , մարդ մուրդ չէր երեւար : Օգնող , օգնող չկար , կանանց լէգէտը կախուեր էին Աստուծոյ , սուրբերու եւ գետի փեշերէն . . .

Յիսունէ աւելի աչքեր սեւեռած էին այն կէտին վրայ , ուր սուգած էր պատանեակը : Կնիզանական մազնիսականութիւնը մխուած էր յորձանուտին մէջ : — Ելա՛ւ , ելա՛ւ , պօռացին : — Մեղքոնի մաղի դուրս իկան ծրփծփուն ալիքներէն : Տակաւին կը մաքառէր՝ եւ թեւատարած օդնութիւն կը խնդրէր . . .

Յանկարծ , մարմին մը նետուեցաւ ջրին մէջ էն բանձրիկ փուլէն , ուրկէ կը հոսէր կանանց ողբ ու կոծը՝ ու լողալով հասաւ շնչասպառ Մեղքոնին . երկուսին էլ զանգուր գանգուր մազերը՝ ջրին երես ծածան , ծածան իրար խառնուեցան . օդնութեան ձեռքը կարկառուած էր , ու սկսած էր Մեղքոնին փրկութիւնը : Գրեթէ վայրկենաբար օգնողը՝ զայն զրկելով ափունքը հանեց եւ հերոսաբար յանձնեց Մեղքոնին մեծ մօրը , որ ներկայ էր : Մեղքոնը շուտով սթափեցաւ :

Ո՛ւհ , որքան օրհնութիւն եւ տիւալ ազատարարութիւն , խիղախ աղջկան , որքան համարյր անոր փրփրամած այտերուն : — Ելի՛ս , ծաղկիս Գոհար , եօթ որդու մէկիկ

եղնիս, — կը շնորհաւորէին զայն, այն ամէնքը, բոլոր այն կնիկներ, որ էնքան խուլոր աչօք կը նայէին Վառէի պորտը ու սըրտոտ աղջկան: Անշուշտ ճանչցաք թէ ո՛վ էր Գոհարը: — Անարգուած ու նախատուած փառիկը, Վառէի մէկիկ լոյսը:

Գեղէ գեղ ճօշք ու գովք եղած էր այս անձնու իրութիւնը:

* * *

Աշխարհը անցուկ մոռցուկ է: Անցան քանի մ'ամիսներ, ամառը գնաց, աշունը եկաւ. գնաց մոռցուեցաւ Վառէի աղջկան էլ անձնութիւնը: Բազմը դեռ չէր ուզեր, կամ կը յամառէր միայն Գոհարին երեսին: Երբ որ Վառէն լսեց թէ Մեղքոնը մազապուր ազատեալ է խեղդող ալիքներէն, էն էլ իր Գոհար աղջկայ ձեռք, իսկի տարակոյս չունեցաւ որ կարելի էր զանոնք՝ ինչպէս ալիքին ծոցը, նոյնպէս պսակին ներքեւ միացնել: Այս հաւատքն ունէր Գոհարն ալ, որուն սէրը բազմապատկուած էր՝ մանաւանդ որ սիրտ սրտի լողացին հոսանքին մէջէն: Արի՛, տես որ Մեղքոնին սիրտը չտաքցաւ, չտաքցաւ պորտը աղջկայ վրայ, կը տատնէր (ղըզուիլ) մանաւանդ երբ որ փառիկին անունը կը լսէր: Հակառակ էնքան միջնորդող կնիկներու, զորս Վառէն Մեղքոնի փողպատը թողեր էր, աղանձ է՛ ըսաւ, կեցաւ: Աչքը ուրիշ տեղ էր, ուրիշ գոհար մը գողցեր էր խորտակի աղին սիրտը: Մեղքոնի սիրտը իրը չէր: Անոր ծնողքն էլ անհաւան էին Գոհարին, իրենց հնգաբնակ (հաւասարակից) չըլալուն համար: Միտի կին Ապէն՝ գիտենք որ ինքզինքը իբր գոքանչ ծախած էր Մեղքոնին, ու յաջողած էր: Համբային համբայ պէտք էր: Ապէի աղջիկ Նշօն թէպէտ քիչ մը անհամարձակ, բայց աւելի գեղանի ու դուրեկան էր: Վարդնոց երեսներով, մութկապոյտ աչքերով՝ պրակ մազերով հօւրնի հրեղէն մըն էր: Նշօն չէր որ Մեղքոնը կը փնտռէր, այլ վերջինը անոր մատաղ կ'ըլլար: Բանն հոն էր որ ճիշդ Նշօնին սիրտն էլ պաղ կը մնար դէպ Մեղքոն, քանի որ Մկրտի Սեբոբը՝ մանուկ հասակէն սկսած էր տիրել Նշօնի սրտին, ուխտ ու թուղթ ըրեր էին — ապրին՝ իրարու համար, մեռնին հողերուն:

համար: Նշօն երգընցեր էր՝ չուր թիղ մը կանանչ ելնէ վըր իր սրտին (գերեզմանին մէջ իսկ) չպիտի մոռնայ զինք: Բայց էս սէրը գաղտնի էր, ծրարուած ջուխթակ սրտերու մէջ մինակ: Ձէին կրնար աշկարայ ընել, քանի որ Սեբոբը անանկ դասէ՝ բայց գեղեցիկ ու գօտով կարիճ պատանի մըն էր, 17 տարեկան: Լսուէր իսկ՝ ո՛վ կարեւորութիւն կուտար, ի՛նչ հունար, որ համբայի աղջիկ գըլրփախ աղքատի մը աղին տրուէր: Աշունը մօտիկցած էր, այո՛, փոխադարձ բանքերնք մէջ տեղ ելած՝ փեսացուներու, հարսնոցուներու գործերով կը զբաղէին: Թէ Մեղքոնի եւ Նշօնի ծնողաց խօսքերը՝ բաւական ուշ, ալ մէկ ամսնի մէջ դրուեցան. ու հարսանեկան առաջին տրարուածը՝ խօսքկապը տեղի ունեցաւ գաղտնի, աղջկան ու տղին հայրերուն միջեւ միայն: Կը մնար Նշանն ու խաչընկերուրը: Դժուարն էն էր: Միտն կը պահանջէր կանխիկ 20 ոսկի, հինգը նշան՝ ու 15 ը խալան: իշօն զարգընտեր էր: — Քսան ոսկի, ջուխթակ լուծքս էլ տամ, չարատիր, մոմտացեր էր: Բայց ի՛նչ ընէր, սէրն անք էր բարդոցին, էլ չէր կրնար ետ քաշուի: Միտն վարպետօրէն՝ անոր պոչը կապեր էր պաղին: Պէտք էր վճարել, ուրիշ ճար չկար, որովհետեւ գեղացի համբային համար ասիէ աւելի խայտառակ ու խալքառակ լան չկար — խօսկապէն ետքը՝ խալանի համար հարսընցունէն հրաժարիլ: Համբայի անուն ունէր, սակայն ինկած համբայ մը, անտուկը տաս փարայ չունէր: Երեք ամիս հոս հոն զարկուաւ, իր խախուտ համբայութիւնը ծանօթ էր, մարդ մը դրամ չառաւ: Աշունէն ձմեռն էլ անցնելու վրայ էր, փետրվարի մէջ էին՝ անպատճառ լուծում մը պէտք էր. ասիպուեցաւ վախառուի մը դիմել եւ 100 ին 50 տոկոսով 20 ոսկի ճարեց՝ ութ ամիս պայմանաժամով: Բուն Բարեկենդանին վերջին շտապթ օրը Նշանն ու խալընկաւորը տեղի ունեցան, եւ սրովհետեւ միջոց չկար հարսնիքի, պսակը թողուեցաւ յաջորդ աշնան:

Կիրակի առաւօտ՝ Նշօնի խալընկաւորին ձէնքը բոլոր գեղին մէջն էր: Նշօնի ամէն ընդդիմութիւն՝ անօգուտ եղած էր. ուստի մալու էր ու մոլրուկ ինչ կուռնիկ մէջ միմին:

Գոհարն էլ կատարութենէն ինք իր միտք կուտէր, — ի՞նչ, դատի դատող, ուտէ հանգըդ. Աստուածն է ըսել թէ մարդ, ու կը տեղացնէր անէծքներու տարափ մը Նշոյին համար. . . .

Գոհարն ու մայրը անտարբեր չէին, ամէն միջոց ձեռք առնել որոշած էին Մեղքոնէն վրէժ լուծելու եւ անոր նուռքն ու պսակը խափանելու. Վառէն՝ հրեւոյն ջուրը (հարսնութեան զարդերն) անգամ չէր խնայած միջնորդ կիներու, որ էա բարդոցին կապերը քակեն, հնար չէր եղած, Նորուշուրդ պարագայներէ վերջ՝ դիմեցին վիճկըրարներուն, Գանի՝ քանի՝ բազդի թղթեր կախեց աղջկայ օրակն, Դիմեցին նաեւ սուրբերուն, ու հրեւոններու. Ոչ միայն մեծ պահքը, այլ Համարաձումէն մինչեւ Վարդավառ ազապ աղջկանց յատուկ բոլոր պահքերը միաժուռ-ծով անցնել տուաւ Գոհարին. Ո՛րչափ տառապանք խեղճ աղջկան. Սակայն յոյսի աղօթքանը չէր երեւար.

(Վերջին հոսքը յաջորդով)

ԳԵՂԱՄ

ՀԱՐՍԱՆԵԿԱՆ ՀԱՆՈՒՑ

Երկուշաբթի օրը, Սկիւտարի Ս. Կարապետ եկեղեցիին մէջ վայելուչ հանդէսով մը կատարուեցաւ Թէոփիլ էֆ. Լապճինճեանի պատկազրութիւնը Օր. Արշակունի Ճէզվէնեանի հետ, կնքահայրութեամբ Մանգուսեի Տէր եւ Տնօրէն Յովհաննէս էֆ. Գայսէրեանի. Երկու կողմի ազգականներէն ու բարեկամներէն զատ, հարսնեւորներուն մէջ կը նըշմարուէին բաւական թուով հրաւիրեալներ՝ զրական ու լրագրական դասէն, որոնք փութացած էին անձամբ յայտնել իրենց համակրական զգացումները նորապսակ ամուսին, մինչ որիններ հեռագրով ու նամակներով յայտնած էին իրենց շնորհաւորութիւնները. Անպէս որ, երկուշաբթի օրուան հարսնիքը կրնայ կոչել «Հարսնիք մը զրական-լրագրական աշխարհին մէջ», փեսան՝ Թէոփիլ մեր էն ժողովրդական գրողներէն մէկը ըլլալով, ու հարսը՝ քիչ ատենի մէջ ծանօթացած իր Օր. Ճ. Ա. ստորագրութեամբը զոր հա-

ճոյքով կը տեսնենք անգլիական ընտրելագոյն գրուածքներու թարգմանութեանց տակ Մանգուսեի մէջ.

Պսակի արարողութեան նախագահեց Տ. Մկրտիչ արքեպիսկ. Վեհապետեան իր շուրջը ունենալով Տ. Ներսէս Դանիէլեան եւ Տ. Տիրայր Մարգարեան վարդապետները ու քահանայական դասը. Վեհապետեան Սրբազան գեղեցիկ քարոզ մը խօսեցաւ որմէ ետք ներկաները առաջնորդուեցան հարսնետուն ուր պատուասիրուեցան արժանաւորապէս.

Մեր ջերմազին շնորհաւորութիւնները կ'աղղենք նորապսակ ամուսին՝ Տ. եւ Տիկին Թ. Լապճինճեանի, որոնք այնքան ներդաշնակ միութիւն մը կը կազմեն՝ թէ՛ իրրեւ զրի երկու աշխատաւորներ եւ թէ՛ իրենց երիտասարդ հասակովը ու ազնիւ ձիրքերովը.

ԵՐԵՔ ԱՂՋԻԿՆԵՐԸ

Լեւակներով հովանաւորուած, մայառնեւրով չրջապատուած ճամբու մը կը հետեւէր երիտասարդը՝ երբ հասաւ քառուղիի մը որուն կը յանգէին երեք ուրիշ ճամբաներ.

Եւ ամէն մէկ ճամբուն գլուխը կեցած էր աղջիկ մը.

Առաջինը խարտեաչ էր, երկրորդը թըխագոյն, երրորդը չէկ.

Խարտեաչը կտպոյտ աչքեր ունէր, թըխագոյնը՝ կանանչ, չէկը՝ սեւ.

Առաջինը մանիշակի խուրձ մը բռնած էր ձեռքը, երկրորդը կուրծքին վրայ փունջ մը դրած էր մեխակի, երրորդը ակռաներուն մէջ վարդ մը ունէր՝ կառ-կարմիր.

Կանգնազեղ էր առաջինը, գեղածուփ դիմաստուկը կուսական շնորհով մը առլցուն, նայուածքը յստակ, ճակատը՝ ամբիժ, եւ երեսին գոյնը՝ ամօթխածութեան հիւսնալի թափանցիկութիւններով փափկօրէն ստուերուած.

Բարձրահասակ էր երկրորդը, ազատ կեցուածքը պայծառ շնորհով մը առլցուն, նայուածքը՝ փալփուն, ճակատը՝ խրոխտ, եւ

Եւ'ր քո սիրուն մոլորած եմ,
Դուն չունիս իսկի խաղար .
Այ անգգայ դուն սեւ չունիս,
Քո սիրեն նմանի կը (**) քու :

Զգե՛ր իս քո սիրուդ կրակն՝
Վառեցիր ինձի աղւոր ,
Որովնե՛ս եւ որ շան չունիս
Ինչո՞ւ եղար ինձի եւր :

Կ'ելնաս դռնէն իս կը նայիս ,
Ինձի կըսես դուն յիմար .
Այ քո սիրուն չեմ դիմանար ,
Երբա՛մ իյնա՛մ դարե՛ դար :

Աղւո՛ր , գիտե՛ս , քեզմէ ուրիշ
Այս աշխարհիս եւր չունիմ ,
Նազ մի՛ ընե՛ր , Սիրունիքին
Մի՛ ընե՛ր սիրեն անգաղար :

Այս երկրորդը՝ առջ ընդ մէջ թուրքերէնով
խառնուած կտոր մըն է , ինչպէս արդէն Սի-
րունիին տաղերուն մեծագոյն մասը — որոնք
խոշոր հատոր մը կրնան կազմել — թուրքե-
րէն են :

Աղւո՛ր , գիտե՛ս , քեզմէ ուրիշ
Պե՛նիմ պիւր շանպազըմ եօզ ,
Բոլոր սրտով քեզ սիրե՛ր եմ ,
Եւր էլլէրէս կեօզիւմ եօզ :

Զե՛մ գիտե՛ր քե՛ , ապըն ի՛նչ է ,
Պե՛նի նանսան սեւմեզսին ,
Եւ քեզի սրտովս կուզեմ՝
Սեննէլէյին նազըմ եօզ :

Իմ նազելի սիրուն եարս է ,
Սեւլէրիմ սենի սասըզ .
Այս անցաւոր մեջ աշխարհիս՝
Սեննէն գայըր գուզում եօզ :

Ե՛լ գիտե՛ անիմ գիտե՛ ,
Սիրունիքն եարի սըն .
Ասուած գիտե՛ քեզմէ ուրիշ
Պիւր կիւզէյէս կեօզիւմ եօզ :

Հաւաքեց

Բարերդ

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԴԱՐԲԵՆԱՆ

«Լ՝ԵՌՈՒԱԾ՝ ԲՆԱՐ»

Ստացանք Արտաշէս Յարութիւնեանի անդ-
րանիկ գիրքը , Լիւնաժ Բնար , որ կը բովան-
դակէ 54 անտիպ ու ապեալ քերթուածներ :
Սարընան ապարանէն ի լոյս ընծայուած սի-
րուն հատոր մըն է , զին 5 զրուշ : Հեղինակը
իր այս բանաստեղծութեանց հաւաքածուն
նուիրած է իր լուսադրօրը՝ Թլկաաիւնցիին :

ՅՈՒՇԱՏԵՏՐ

Կիլիկիոյ նորընթիւ Ս. Կաթողիկոսին կողմէ
մինչեւ ուրբաթ առաւօտ որ եւ է հեռագիր
հասած չէր Պատրիարքարան : Տ. Սահակ Սըր-
բազանի այս լռութենէն չի հետեւցոր յա-
կայն թէ հրաժարելու մտադրութիւն ունի
իրեն վստահուած հովուապետական պաշտօ-
նէն , Ընդհակառակը՝ , ժամէ ժամ կը սպաս-
ուի իր հաւանութեան զրոյն , որուն յապաղ-
ման պատճառաւ կենթադրուի կարգ մը ձեւա-
կերպութեանց կատարումը , օրինակի համար
Ատանայի ընտրողական ժողովին տեղեկա-
գրին ժամանումը , Երուսաղէմի Ս. Պատրի-
արք Հօր ու Միաբանական ժողովին հաւա-
նութիւնը , նոր Լուսարարապետի մը ընտրու-
թիւնը եւ այլն :

§ Խառն ժողովը այս երեքարթի առա-
ւօտ նիստ կազմելով Ս. Պատրիարք Հօր նա-
խագահութեամբ , զոհութեամբ տեղեկացաւ
Կաթողիկոսական ընտրութեան արդիւնքին
եւ որոշեց հեռագրով շնորհաւորել Ամին. Տ.
Սահակ Ս. Կաթողիկոսը .

§ Երուսաղէմի Պատր. Փոխանորդ Տ. Դէ-
որդ եպիսկ. Երէցեան առաջիններէն մէկը ե-
ղած է շնորհաւորական հեռագիր ուղղող Կի-
լիկիոյ նորընթիւ Ս. Կաթողիկոսին , որուն
միաբանակից ու մտերիմն է եւ որուն հետ
փոխադարձ սէր կը տածեն իրարու նկատ-
մամբ վաղուց հետէ : Նոյնպէս շնորհաւորա-
կան հեռագրեր ուղղած են Երուսաղէմ , Տ.
Բարթողիմէոս եւ Տ. Մեսրոպ արքեպիսկո-
պոսները , քարոզչական պաշտօնով մայրա-
քաղաքս գտնուող Սոոյ միաբաններ եւ ուրիշ
բազմաթիւ եկեղեցականներ ու աշխարհա-
կաններ :

(**) Բարերդի գաւառաբարբառ յաճախ «կընն կը յե-
տադասէ բային , ինչպէս՝ խօսիմ կը , (կը խօսիմ) . խաղամ
կը , (կը խաղամ) . Երբեմն ալ կրկնութիւն կ'ընէ . այն ա-
ռան Պոլսոյ ճկորթին առումին կը մօտենայ , ինչպէս՝ կեր-
պիմ կը , (կերթիմ կոր) . կուտիմ կը , կըսիմ կը , եւայլն :

§ Թուրք թերթերը , ինչպէս նաեւ Մոնիթօր ու Ֆրանսէրէն Սէրվէք, ծանուցանելով խաղայնեան Սրբազանի ընտրութիւնը՝ իբրեւ Կաթողիկոս Կիլիկիոյ՝ Կենսազրութիւնը հրատարակած են համակրական աղբերով :

Եւրոպայի Հայոց առաջնորդ Իւթիւճեան Տ. Դէորդ եպիսկոպոսին դէմ անպատճառ զրկելիք լան մը գտնելու մարմաջը այնքան բուռն կերեւայ կարգ մը թղթակիցներու քով, որ անոնցմէ մէկն ալ ելեր հիմակուց կը քըննադատէ այն եղանակը որով Իւթիւճեան Սըրբազան . . . պիտի օծէ եղեր յառաջիկայ տարի Բարիլի նորակառոյց հայ եկեղեցին որուն հիմնարկէքը դեռ նոր կառարուեցաւ : Երանելի՛ թղթակից , որ գուշակի օգի ունի եւ 1902 էն ապահովապէս գիտէ թէ 1903 ին աւարտելիք եկեղեցիին օծումը ո՛վ պիտի կատարէ եւ ի՞նչ եղանակով , եւ իրար անցեր է ասոր համար :

Կիւմեանց կտակը օրուան գոհացուցիչ իրողութիւնն է , մեր համայնքին համար , Կիլիկիոյ Կաթողիկոսական ընտրութեան բերկրառիթ ելքին հետ մէկտեղ : Չորեքշաբթի օրը խոն Ժողովին մէջ լացուեցաւ Յովհաննէս էֆ. Կիւմեանի կտակը, — որուն մէկ օրինակն ալ գտնուած էր Մարտիլիա , իր դրամարկլին մէջ — որով հանգուցեալ ձերուներն 10,000 ոսկի կը թողու բարեգործական ու կրթական հաստատութեանց , հետեւեալ կերպով .

Այս գումարին կէսովը միւլք կալուածներ պիտի գնուին , իսկ միւս կէսը շահագործուելով պիտի յատկանայ՝ Ա. 100ին 40ը Կեսարիոյ Կիւմեան վարժարանին : Բ. 100ին 10ը Ս. Էջմիածնի Մայր Աթոռին : Գ. 100ին 10ը Երուսաղէմի : Դ. 100ին 5ը Ս. Փրկչեան Հիւանդանոցին : Ե. 100ին 15ը աղքատ աղաքներու բաշխուելու համար գալոցական զրքերու ապագրութեան : Զ. 100ին 20ը դրամագլուխին վրայ պիտի բարդուի տարուէ տարի Այս կարեւոր կտակին միւթէվէլլի կարգուած է Ժամանակին Պատրիարքը : Ժողովը իր գոհունակութիւնը յայտնելէ յետոյ , բոլոր ներկաները յօտին կանգնած , Ս. Պատրիարքը աղօթքներ կարդաց հանգուցելոյն հոգւոյն համար :

Աղեփսանգրիոյ մէջ քահանայի մը ձեռնա-

դրութեան խնդիրը առիթ առած է որ 400ի մօտ ստորագրութեամբ հանրագիր՝ մը պատրաստուելով Եզիպատոսի առաջնորդ Տ. Յովսէփի կպիակ. Այվազեանի դէմ , Պատրիարքութեան զրկուի :

Ս. Փրկչի Հիւանդանոցը 100 ոսկի նուէր ստացաւ բարեյշատակ Սարգիս էֆ. Կիւպէնկեանի այրի՝ Տիկին Տիրուհի Կիւպէնկեանի կողմէ որ իր կրտսեր որդւոյն՝ Վահան էֆ.ի ամուսնութեան առթիւ , ի Լոման , ագնիւ մտածումը ունեցած էր նպատակու Հիւանդանոցին որ ամբողջ Կիւպէնկեան գերդաստանին հոգածութեան առարկան է արգէն , եւ մասնաւորապէս անոր պետին՝ Պատրիկ էֆ. Կիւպէնկեանի , — Հոգաբարձութեան Ժրաջան առեւտապետին :


Խաղաղիկի Դալֆայեան Որբանոցին մայր Երանուհի մայրապետին հիւանդութիւնը զգալի բարեքում մը կրած է :

Պողոս փառա Նուպար հրաժարական աուեր է Աղեքսանդրիոյ Թաղ. Խորհուրդի առեւտապետութենէն որ՝ այս համեստ բացատրութեան հակառակ՝ է՛ն կարեւոր ու վստահութեան արժանի պաշտօնն է տեղւոյն հայ համայնքին համար : Այս առթիւ , Արեւելի Աղեքսանդրիոյ թղթակիցը կը գրէ. — «Չէինք սխալած , երբ ասկէ առաջ զրեցինք թէ Պողոս փաշա Նուպարի հրաժարականը պարզապէս արդիւնք է Արբանոց պէյ Բարթոլի պաշտօնավարութեան դէմ Նորին Վսեմութեան զգացած դժգոհութեան : Այս անգամ Պողոս փաշա Նուպարի շատ մօտիկ անձնաւորութիւններ , որոնք դեռ նոր դարձած են փաշային քովէն , նոյնը կը հաստատեն եւ աւելին : Յիշեալ յօյժ իրադեկ անձնաւորութեանց խօսքին նայելով , Պողոս փաշա Նուպար հետաքրքրութեամբ կը սպասէ եղբի թէ Պատրիարքարանը ի՞նչ ընթացք պիտի բռնէ իր հրաժարականին նկատմամբ : Մեր համոզումով , ինչպէս ասկէ առաջ ալ զրեցինք , Պատրիարքարանը ի նկատի առնելով հանրային տեղական եւ ընդհանուր շահերը , զրեւել է Պողոս փաշային եւ Ն. Վսեմութեան կարծիքը լսելու է՝ թեմական գործերու անկրպարան վիճակին վերջ մը դնելու համար : Ն. Վսեմութեան հրաժարականը շատ սերտ

առնչութիւն ունենալով այդ շահերուն ու գործերուն հետ, Պատրիարքարանը ջանալու է, Ն. Վսեմութեան հետ բարեօրէն համաձայնութեամբ մը, այդ հրաժարականը ետ առնել տալ, Իսկ Սրբազան Առաջնորդին տեղ զրկելու է, Պատրիարքական Փոխանորդի պաշտօնով, կարող, լեզուազէտ եւ վարչագէտ եւ պիտկոպոս մը որ գիտնայ գործածել թէ՛ անձ. նաւորութիւնները եւ թէ՛ ժողովուրդը, խնայացի ուղղամտութեամբ, առանց այս կամ այն կողմին ձեռքը գործիք դառնալու: Խեղացի ուղղամտութեամբ մը կ'ըսենք եւ կը ծանրանանք այդ բացատրութեան վրայ, զի կարգ մը ապուշութեան տանող յամառութեամբ «ուղղամիտ»ներ ալ պակաս չեն մեր մէջ, որոնք գործ չինելու տեղ գործ կ'աւելնեն»:

Ս. Փրկչի Հիւանդանոցի 1903ի պարզ Օրացոյցը հրատարակուած է արդէն, նախորդ տարիներէ աւելի խնամեալ եւ մաքուր տնտեսութեամբ: Իր սովորական պարունակութեան զատ, կը բովանդակէ իւրաքանչիւր ժամերգութեանց եւ արարողութեանց մասին մանրամասն ծանօթութիւններ, ինչպէս նաեւ բարձրաստիճան եկեղեցականի մը կողմէ պատրաստուած՝ պաշտամանց ընդհանուր կէտերու մասին յատուկ խրատական մը որ աւելի ճոխացուցած է պարզ Օրացոյցը: Անցեալ տարի 55000 ի չափ պարզ Օրացոյց պատած ըլլալով, Օրացոյցի հասոյթը կարեւոր եւ անհրաժեշտ դարձած է Հիւանդանոցին համար: Ուստի Հոգաբարձութիւնը իրաւամբ կը յուսայ թէ ամէն բարեւոյս աղագային պիտի ինքնայ գէթ մէկ օրինակ գնել անոնցմէ, ո՛չ միայն Օրացոյց մը գնած ըլլալու՝ այլ նաեւ մեծ հաստատութեան մը մէջ խնամուած 1100 պատուարկոց նպաստ մը ըրած ըլլալու զիտակցութեամբ:

Հոգաբարձութիւնը, այս առթիւ իր հրատարակութեան տուած Ծանուցման մէջ կը խոստարարէ թէ միմիայն Հիւանդանոցին Օրացոյցն է որուն ճշգրտութիւնը հաստատուելով վաւերացուած ու արածուած է Պատրիարքարանէն: Հետեւաբար պէտք է ուշադիր ըլլալ անոնց կողքերուն վրայ գտնուած կնիքին ուր գրուած է «Սեպհակաճութիւն Ս. Փրկչի Հիւանդանոցի. — 1903»:



Արամ Անտոնեան կը խնդրէ մեզմէ ծանուցանել թէ վերջնականապէս հրաժարած է Մաղիկի խմբագրութենէն:

Յաւով կը ծանուցանենք հանգուցեալ Յակոբ Ժաշայի քրոջ՝ Գաղազեան Աղանի Տիկնոջ մահը: Հիւանդանոցին եւ ուրիշ բարեհաւատակ հաստատութեանց օգտին աշխատելու համար կազմուած Տիկնանց Խնամակալութիւններէն անբաժան էր իր անունը, եւ իրապէս արդիւնաւոր կըլլար միշտ իր մասնակցութիւնը: Դեռ նախորդ շարժուն Մասիսի մէջ հրատարակեցինք Խապիւղի Գալֆայեան Որդանոցին ներքին հսկողութեան համար Տիկնանց Խնամակալութեան մը կազմութիւնը որուն էն գործօն անդամուհիներէն մէկը պիտի ըլլար Տիկին Աղանի, եւ հաւանաբար գանձապետը կամ ատենապետը՝ երբ զիւանի ընտրութիւն կատարուէր: Մահը չի թողուց որ Գալֆայեան սանուհիները վայելեն անոր խնամքները: Անհատական կեանքի մէջ ալ իր կեանքը բարեկործութեանց շարք մըն էր, — կը պատմեն, — օգնելով իրեն զիմու աղքատիկ ընտանիքներու եւ ամէն կարգի չքաւորներու:

Մեր ցաւակցութիւնները կը յայտնենք հանգուցեալ Տիկնոջ եղբորը՝ Նշան Էփ. Գաղազեանի:

ՍԷՄՓԼՈՆԻ ՓԱՊՈՒՂԻՆ

Սէմփլոնի փապուղիին աւարտումը մօտեցած է հիմա: Անցեալ Յունիս 30ին վերջացող կէս տարուան մէջ 13,345 եարտա պեղուած է: Սապէս. 8,111 եարտա Զուիցերական կամ հիւսիսային կողմէն եւ 5,234 եարտա Իտալական կամ հարաւային կողմէն, եւ որովհետեւ փապուղիին ամբողջ երկայնութիւնը 21,850 եարտա կամ 12 $\frac{1}{4}$ մղոն պիտի ըլլայ, կրնայ ըսուիլ թէ Ալպեան այս չորրորդ փապուղիին շինութեան գործին երկու երրորդը աւարտած է: Պայմանագրութիւնը կը տրամադրէ թէ փապուղիին երկաթուղւոյ առաջին մասը պէտք է աւարտել, այսինքն երկաթուղւոյ կապարտատ վիճակի հասցենել, անոր սկզբնաւորութենէն մինչեւ 5 $\frac{1}{2}$ տարի ետքը: Աշխատութիւններն սկսուեցան 1898 Օգոստ. 15ին, երբ Զուիցերական

եւ Իտալական կողմերէն միանգամայն ձեռնարկուեցաւ պեղել, եւ գործը պարտի ամբողջութիւն աւարտել 1904 Մայիս 13 ին, եթէ ոչ՝ օրական 200 անգլ. ոսկի առգանք վճարուելու է քանի որ որ անցնի վերայիշեալ պայմանաժամէն ետքը : Եւ եթէ գործողութիւնները երկարին մէկ տարիէ աւելի, իշխանութիւնները արտօնուած են գործը ետ առնել այժմու պայմանագրողներէն եւ ուրիշներու յանձնել :

Փապուզիին մեծ երկայնութեան պատճառն այն է որ անիկա կը ծակէ Ալպեանները ծովուն մակերեսէն շատ աւելի վարէն քան անոր երեք նախորդները, Սընիս լեռանը, Սէն Կոթարինը եւ Ալքէրծինը, որոնց գագաթի բարձրութիւններն են կարգաւ 4,298 ոտք, 3,788 ոտք եւ 4,300 ոտք ծովուն մակերեսէն վեր, մինչ Սէմիլոնինը 2,310 ոտք է : Հետեւապէս Սէմիլոնի փապուզիին բարձրութեան պայմանները շատ աւելի նպաստաւոր են քան միւս աղբերունը : Միւս կողմէ, այն աղբերուն վերաբերող ուր որ գործ կը չինուի, խնդիր մը կար թէ ինչպէս յաղթելու էր արտակարգ ջերմութեան աստիճանի դժուարութեան, որ հարկաւ պիտի հանդիպէր լեռներուն տակ՝ երբ պեղուէր այնպիսի խորութեան մէջ, աեղ աեղ 7,000 ոտք : Հոս ի դէպ է ըսել թէ 105⁰ Փարէնհայթ կը կարծուէր ջերմութեան բարձրագոյն աստիճանը, բայց վերջերս առկէ դրեթէ 20 աստիճան աւելի գոնուեցաւ : Այս դժուարութիւնը վերցնելու եւ ուրիշ մը պարզելու համար էր, այսինքն 12¹/₄ մղոն երկայն փորուածքի մը օգտաւորութիւն համար, որ ծակելու նոր կերպ մը որդեգրուեցաւ : Այժմ գոյութիւն ունեցող Ալպեան փապուզիիններէն ամէն մէկը երկու երկաթուղւոյ գիծ ունի, բայց Սէմիլոնինը պիտի բաղկանայ մէյմէկ երկաթուղւոյ գիծ պարունակող երկու փապուզիիններէ : Իւրաքանչիւր փապուզի պիտի օգտուի միւսը, եւ արդեամբ այսպէս է իրողութիւնը արդէն, մինչ չիւնութեան միջոցին փաքրագոյն փապուզիին — որ կը պարունակէ նեղ գծով երկաթուղի, որուն վրայ կ'երթեւեկեն ճնշեալ օդ բովանդակող վայրաշարժներ, որոնք կը գործած-

ուին շինութեան վերաբերեալ նիւթեր եւ հանուած հող, եւլն. կրելու — կը պարունակէ ժայռերը ծակելու համար գործածուած ջրաբաշխական մեքենաները, նաեւ ականները որոնք հաւաքուած ջուրերը կ'առնեն կը տանին, եւ հետագորի ու ձայնագորի թելերը, եւայլն : Թեթեւ, կարճ կորագիծ մը կը ձեւացնէ փապուզիին իւրաքանչիւր ծայրը, բայց մնացած 11.9 մղոն հեռաւորութիւնը ուղղագիծ մըն է, այնպէս որ կրնայ ըսուի թէ փապուզիին չիտակ հիւսիսէ հարաւ կ'երթայ :

Դառնանք հիմայ մեծ փապուզիին, ժայռ ծակելու, պեղուած աեղերը օգտուելու, ջրհանները շարժելու, գործաւորի խառութեան մեքենաները բանեցնելու եւ ելեկարահանելու լոյսի եւայլն բոլոր ոյժը կը ստացուի ջուրէն, Ջուլցերական կողմը Ռոն գետին վրայ եւ Իտալական կողմը Տիվէրիա գետին վրայ կ'առուցուած կազմածներու միջոցաւ : Անտարակոյս միեւնոյն շարժիչ ոյժը պիտի ծառայէ աւելի վերջերը փապուզիին կառախութեանը վազցնելու : Ահագին ջրաբաշխական 250 լիպրա ոյժը կրնայ ծառայել անիւներ դարձնելու, եւ անոնք որ ժայռ ծակելու կը գործածուին՝ ամէն մէկը 2,225 ձիու ոյժ ունին եւ ծակելու կէտին իւրաքանչիւր մասնաշափին վրայ 1,500 լիպրա կը ճնշեն : Երկու հզոր հովհանարներ (թէ եւ մէկ անգամին մէկը կը գործէ միայն), որոնք կ'առուցուած են փապուզիին երկու բերանները, պեղուած աեղերուն 58,000 խորանարդ ոտք օդ կը մատակարարեն վայրկենի մէջ, իսկ ջերմութիւնը մեղմացնելու համար ջրհանով սառնարանի ջուր կը մղուի ներս եւ կը սրսկուի : Աշխատող գործաւորներուն միջին թիւն է աւելի քան 3,000. եւ շնորհիւ այն մեծ նախագլուշութիւններուն, որ կ'ըլլան փապուզիին ներսիցին զանաւորներուն ապահովութեանը համար, եւ շնորհիւ դուրսիցին զանաւորներուն բարեւաւորութեան համար հայթայթուած առողջապահական ընտիր միջոցներուն, արկած չատ քիչ պատահած է :

Արսօնսէր Կ. Ս. Իւթիւիճեմն

Տպագրութիւն Ե. ՄԱՏԹԻՆՍԵԱՆ
Կ. Պոլիս, Ֆինանսըլար եօղուշու, Թիւ 27

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԵՆՐԱՅԻ



ԱՊԱՐԻԿ ԿԱՋԱՌԻՍ

346 348J97

உள்ளுயிர் தோன்றி

Գրեթե ամբողջությամբ

გვინათ. გვინათ.

4. *Amphiprion*, *subgenus*

Երկրայ մեծ փողոց թիւ 13

Հեռնայլ Վանսուսուը ունի եւրպայան
ճաշակով պատրաստուած գոհարեհէնի
ամենքն ալ առաջնակարգ բլլալու պայմանաւ
Հեռնայլ Վանսուսան գինիոն անժոցեի հոյո
Հեռնայլ Վանսուսուը ունի աթծաթիւդէն
առարկանիւ :

ՀԻՐԱՅԻ ՎԱՆԱՐԱՏՈՐՆԵՐ ԵՆԻՔ ԺԱՌԱՅՐԵՆԻՔԻՆԻՔԻ
ԵՐ ԱՐԺԱՅԻՆԱՅ ԳԱՐԱՂԱՆԻՔԻ (ՍԿԱՐՔԻ) :

ကုသလကုသလ

Հարկւրին բուն կանխիկ, միացեալին հա-
մար շարաւթագան հարկւրին հինգ զճարութիւն
կանխիկ գնորդին համար 100 ին 5 գնդէ,
Գործածուած գոհարեղէններ՝ Ելէճ զԼուս-
ուած 265 100 ին 10 գնդէրով եւս կառնուին:



Անկարեկի է որ ընտանիք մը առանց կտրի
մեքենայի մնայ բայց էակաւ կէտն է լաւ մեքե-
նայ մը ունենալ որովհետեւ լաւ մեքենայ մը
անթիւ եւ անհամար ծառայութիւններ կը մատու-
ցանէ, մինչդեռ գէշ տեսակի մեքենայ մը անվերջ
դժգոհութեան եւ տաղտուակի ազդեւոր մըն է ։
Բոլոր աշխարհ գիտէ թէ՛

U. S. F. I.

(ՀԱՅԲԱՅԻՉ ԿԱՅՍ. ՊԱԼԱՏԱՆ)
The Singer Manufacturing Cie.

մեքենան լասագորյն է . սոյն մեքենայն ամենէն
աւելի կատարելագործութեամբ , հոս 18 000 000 ԼՐ Լինք եւ
դիւրագործածելին ըլլալուն թովանդակ աշխատահի
մէջ՝ ամէն ոք Սինկկերի մեքենայնորը կր գտնէ :

Ձեռքի, ոտի ու ոտի եւ ձեռքի
միջուկամայն մեքենաներ
Կը գտնուին:

ՍԻՆԿՏՐՈ ՎԵՐԵՆԱՆԵՐԸ ԿԸ ՑԽԻՈՒՄԻՆ ԱՐԱՐԱՅԻ ՍԻՆԿՏՐ ՇԼԷՐՈՒԹԵԱՆ ԱՊՐԵՍԻՍՈՒՄ՝

ԱՅՐԱ. } 1. Մեծ փողոց, Պօն Մառշէի դէմ, Թ. 343 և 343 կրկին
2. Մեծ փողոց, Կառլսթա Սէրայի Լիւսէին դէմ.

ԳԱԼԱԹԱ } 1. Սինկէր լաստն, Թիւնէլին հասեւր.
2. Գառաքէօյ, Թրաքսիկիին կայարանին դէմ.

ՊՈԼԻՍ } 1. Սուլթանն Հասմամ, Թիւ 2.
2. Սուլթանն Պէլագիտ, Թրամուէյի Կայարանին դէմ, Թ. 13

ՍԿԻՒՏԱՐ Զարչը Գոյու, Բ. 120.

Դասերը եւ նորոգութիւնք ձրի .

Quisq[ue] suu[m] n[on] p[ro]p[ri]u[m]

Մասնագիտեր զատառաց բոլոր բաղաճներուն մէջ

Սինկէրի ընկերութեան կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա, Մեծ փողոց, Թ. 343 եւ 343 կրկին, Սարգիս պէյ Տիւղզօլուի տունը :

WILLIAM, GUARDIAN

Հրատարակուեցաւ

ԸՆԴԱՐՁԱԿ

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՕՐԱՑՈՅՑ

ՀԱՆՐԱԳԻՏԱԿԱՆ

1903 ՏԱՐԻՈՅ

(ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Յ. ՄԱՏԹԵՈՍԵԱՆ)

Գ. ՊԱՆՏԱՍԱՐԵԱՆԻ սոյն ԸՆԴԱՐՁԱԿ ՕՐԱՑՈՅՑը, որ երկարամեայ կանոնաւոր հրատարակութեամբ հաստատուն համբաւ մը ունի, յառաջիկայ տարուան համար ի լոյս ընծայուած է շատ աւելի ճոխ բովանդակութեամբ մը որ ամէն կարգի ընթերցողներու համար օգտակար ու շահեկան կը դարձնէ զայն:

Գին 3 դր.

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՕՐԱՑՈՅՑին ՀԱՄԱՌՕՏն ալ հրատարակուած է եւ կը գտնուի բոլոր հայ գրավաճառներուն քով:

Գին 1 դր.

Վաճառման կեդրոնատեղի, Յ. Մատթէոսեան թղթավաճառանոցը Պոլսլ Հաււլ, Կ. Պոլիս:

ԻՒՆԻՐՆ

ՀՐԴԵՀԻ ԵՒ ԿԵՆԱՅ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀԱՍՏԱՏԵԱԼ Ի ԲԱՐԻՉ 1828-1829

ՀՐԴԵՀԻ ՃԻՒՂ

Մինչեւ 1899ի վերջը հասուցեալ ձեռք	240,000,000 ֆր.
1899ին գանձուած ապահովագրին	19,500,000 »
Դրամագլուխ եւ պահեստ	105,000,000 »
Ապահովագրեալ գրամագլուխ	18,000,000,000 »

ԿԵՆԱՅ ՃԻՒՂ

Մինչեւ 1889ի վերջը հասուցեալ ձեռք	99,000,000 ֆր.
Ընթացիկ ապահովագրութիւնը	253,000,000 »
Դրամագլուխ եւ պահեստ	150,000,000 »

որ ընթացիկ ապահովագրութեանց գումարին հետ կը համեմատի 60% — ինչ որ «Իւնիօն»ի ապահովագրելոց կ'ընծայէ հսկայ երաշխաւորութիւն մը ՈՐՈՒՆ ՆՄԱՆԷ ԿԱՐԵԼԻ ԶԷ ԴՏԵՆԷ ԱՐԵԻՆԷԼԻ ՄԷՋ ԴՈՐԾՈՂ ՈՐԻՒՇ ՈՐԵԻՔ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՔՈՎ:

Արեւելքի համար մասնաւոր սակացոյց զեղչեալ գիններով: Նպաստաւոր պայմաններ անհամեմատ կերպով աւելի գերազանց քան ուրիշ որ եւ է ընկերութեան պայմանները: Եահարաժիններու տարուէ տարի անմիջական վճարում, որով Իւնիօնի ապահովագրողը Ձերժ եւ այն վնասներէն եւ յուսախաբուրիւններէն, որոնց կ'ենթարկուին միշտ այն անձինք, որ Եահարաժիններու բարդման (accumulation des b6n6fices) ՅՈՒԻ եւ ՎՆԱՍԱԿԱՐ դուրեաւմբ գործող ընկերութեանց կ'ապահովագրուին:

Ընկերութեան գրամատունն է ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԳԱՆՔԱՆ Թուրքիոյ եւ Արեւելքի Տճօրհանրին

Կ. Պոլիս, Կալարա, Թահեսպուրուն խան, Օսմ. Պանֆային դիւանք Կորնակալութիւնը Թուրքիոյ դիւանք Զալաքաց մէջ